## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1944 ՅՈՒԼԻՍ – ԴԵԿՏԵՄԲԵՐ Թիւ 7–12


Էջ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

Ն. Ս. Պիոս ԺԲ. Սրբազան Քահանայապետի Ս. Կիւրեղ Աղեքսանդրացիին մահուան 1500–ամեակին առիթով . . . . . . 49

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ. Ե. Փէչիկեան. – Մեսրոպ Սէթ . . 61

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

Հ. Թ. Թովմաճեան. – Համառօտ ակնարկ մը ներկայ Հայերէնին վրայ . . . . 69

ԳՐԱԿԱՆ

Հ. Յ. Թորոսեան. – Վենետիկ . . . 74

Հ. Ղ. Ալիշան. – Հայոց աՀեղազօր Տրդատ Թագաւորի մահը (քերթուած, Թրգմ. աշխ. Հ. Վահան Յովհաննէսեան) . . . . 82

Արմաւիրեան. – Տենչանքներս . . . 87

Հ. Ղ. Ալիշան. – Անտիպ փշրանք մը . . 88

Յ. Նիրէօ. – Գնչուն անտառին մէջ (Թրգմ. Հունգարերէնէ ***) . . . . . 89

Յովհան Հայկազ. – Քնարական կտորներ, (Հ. Արսէն Կոմիտաս Բագրատունի, Նարեկ, Մխիթար Սեբաստացի) . . . . . 93

ԿՐԹԱԿԱՆ

*** Ուղղահայեաց գրութիւնը եւ անոր ազդեցութիւնը աշակերտին վրայ (Թրգմ. «Մինեռվայ»էն) . . . . . . . 91

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Հ. Մ. Ճ. – Արարատ «Հայկական Եղերերգ» (Հեղ. Ճիոզուէ Ֆակերածծի) . . . 94


## SOMMAIRE

1944 Juillet - Décembre N. 7–12


PAG.

*Lettre encyclique de S. P. Pie XII*

A l'occasion de XVe Centenaire de la mort de St. Cyrille, patriarche d'Alexandrie . . . . . . . 49

PHILOLOGIE

*P. E. Paitchikian.* — Mesrop Seth . 61

LINGUISTIQUE

*P. T. Thomadjian.* — Un bref aperçu sur l'arménien moderne . . . . 69

LITTÉRAIRE

*P. J. Thorossian.* — Venise . . 74

*P. L. Alishan.* — A la mort du très vaillant roi d'Arménie Tiridate (poésie trad. en arm. mod. par le R. P. Vahan Hovhannessian) . . . . . 82

*Armavirian.* — Mes désirs! (poésie) 87

*P. L. Alishan.* — Un petit morceau inédit . . . . . . . . 88

*J. Nyirö.* — Le Bohémien dans la forêt (trad. du texte hongrois par ***) 89

*Jean Haïgaz.* — Morceaux lyriques . 93

PÉDAGOGIE

L'écriture verticale et son influence sur l'élève (trad. de «Minerva» par ***) 91

RECENSION

*P. M. Dj.* — Ararɛt (poésie de G. Fagherazzi, traduite en 28 langue) . 94



1843 - 1944

# ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԳԻՏԱԿԱՆ – ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՅՈՒԼԻՍ - ԴԵԿՏԵՄԲԵՐ ԹԻՒ 7–12

ՀԱՏ. ՃԲ ՈՒՅՂԴ-ՈՒՅՂԴ

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ


## ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ
### Ն. Ս. ՊԻՈՍ ԺԲ. ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ
### Ս. ԿԻՒՐԵՂ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻԻՆ ՄԱՀՈՒԱՆ 1500–ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

## ԵԿԵՂԵՑԻՈՅ ՃՇՄԱՐԻՏ ՄԻՈՒԹԻՒՆԸ

ԱՐԳՈՅ ԵՂԲԱՅՐՆԵՐ
ՈՂՋՈՅՆ ԵՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Եկեղեցին մեծամեծ գովեստներով բարձրացուցած է միշտ Աղեքսանդրիոյ հայրապետը՝ Ս. Կիւրեղ՝ որպէս առանձնայատուկ փառքը Արեւելեան Եկեղեցւոյ եւ ամենէն երեւելի պաշտպանը Ս. Կոյս Աստուածամօր: Հաճոյք է Մեզի հիւսել հոս համառօտիւ սոյն այս գովեստները իր մասին, մինչ կը լրանան տասնըհինգ դարեր այն օրէն՝ երբ նա փոխանակեց այս երկրաւոր պանդըխտութիւնը երկնային հայրենիքին հետ: Եւ յիրաւի Մեր Նախորդը Ս. Կելեստինոս Ա. իր առենէն սկսեալ կը կոչէ զայն. «Քաջ պահապան կաթուղիկէ հաւատքին»(1), «քահանայ արժանաւոր մեր ամենամեծ գնահատանքին»(2), եւ «առաքելական մարդ»(3): Քաղկեդոնի Տիեզերական Ժողովը ոչ միայն կը դիմէ անոր վարդապետութեան՝ ճանչնալու եւ հերքելու նորանոր մոլորութիւններն, այլ եւ չի վարանիր համեմատելու զայն նոյնիսկ իմաստութեան հետ [illegible]պիսի մեծ վարդապետի Մեծն Լեւոնի(4), որ նաեւ իր կարգին կը գովաբանէ անոր գրութիւնները կը յանձնարարէ անոնց ընթերցումը, իբրեւ բոլորովին համաձայն Ս. Հայրերու հաւատքին(5): Նուազ յարգանքով չէ որ կ'արտա-

(1) Թուղթ ԺԲ, 4 Migne PL. 50, սիւն 467:
(2) Թուղթ ԺԳ, 2, անդ, 471:
(3) Թուղթ ԻԵ. 7, անդ 552:
(4) Մանսի Զ. 953, 956–7. Է, 9:
(5) Թուղթ առ կայսրն Թէոդոս, Migne PL. 54, սիւն 891:


1-Ӣ Э

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

686-73

digitised by A.R.A.R.@